**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-21-7/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 30.04.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Դառես» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Քոսակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 05.04.2021թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-21-7/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.8 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին:

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն ըստ Հավելվածներ N 1-ի և N 2-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1. Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Փոփոխությանը կից Հավելվածներ N 1-ը և N 2-ը հանդիսանում են Փոփոխության անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Դառես» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Գալշոյան 36շ. բն. 1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | "Ամերիաբանկ" ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 1570023676110100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02624964 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| _______________ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ | _______________ Ն. ՔՈՍԱԿՅԱՆ |

Հավելված N 1

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարումը 2021թ., ընդ որում՝ 2-րդ եռամսյակ |
| | | | | | | Ոչ ուշ քան մայիսի 20-ը |
| 1 | ջրի թիթեղյա ամաններ (բիդոն) /Ջրի բաք 300լ. չ/պ՝ հենակետի/ | հատ | 100 | 126000 | 12600000 | 100 |

Հավելված N 2

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հ/հ | անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝ | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | ջրի թիթեղյա ամաններ (բիդոն) /Ջրի բաք 300լ. չ/պ՝ հենակետի/ | 39221180/1 | 12600000 | 12600000 | 12600000 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Դառես» ՍՊԸ
տնօրեն

Ն. ՔՈՍԱԿՅԱՆ